Արձանագրություն N 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-8/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտարարության տեքստը հաստատելու մասին նիստի

ք. Երևան «02» մայիս 2018թ.

Ժամը՝ 17:15

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Վ. Առաքելյան – ՀՀ ՖՆ <<Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան>> գործակալության պետ

Հանձնաժողովի անդամներ

Գ. Ղազարյան - ՀՀ ՖՆ <<Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան>> գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների հաշվառման և կառավարման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԳԱ,

Ռ. Քյոսայան - ՀՀ ՖՆ <<Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան>> գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների հաշվառման և կառավարման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԳԱ,

Մ. Միքաելյան – ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ,

Ա. Գրիգորյան – ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ:

Գնումները համակարգող

Մ. Սարգսյան՝ ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության գնումների գործընթացի կազմակերպման բաժնի պետ

1. **Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 40-րդ օրը, ժամը 17:15-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Երևանի ադամանդ» ապրանքա-հումքային բորսա» ՓԲԸ	ՀՎՀՀ 02201301, հասցե՝ ք. Երևան, Ազաթանգեղոսի փող., 6/1 շենք, էլ հասցե info@yercomex.am,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկած գները ներկայացվում են ստորև.

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (%)
		«Երևանի ադամանդ» ապրանքա-հումքային բորսա» ՓԲԸ
		Առաջարկված տոկոս
1	Թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, ինչպես նաև թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերի պետական պահուստների օտարման նպատակով աճուրդների կազմակերպման ծառայություն	0 (զրո %)

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Երևանի ադամանդ» ապրանքա-հումքային բորսա» ՓԲԸ-ին:

2. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն:

3. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Երևանի ադամանդ» ապրանքա-հումքային բորսա» ՓԲԸ-ի:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել հրավերի փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի ղեկավար՝ _____ Վ. Առաքելյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ. Ղազարյան

_____ Ռ. Քյոսայան

_____ Մ. Միքաելյան

_____ Ա. Գրիգորյան

Գնումները համակարգող՝ _____ Մ. Մարգսյան